

Խմբագրություն՝ 15
Վերջին փոփոխության ամսաթիվ՝ 14.11.25թ.

1. Արարատ-Կոմֆորտ ավանդ

Ավանդի տեսակ	Ժամկետային		
Ներդրվող նվազագույն գումար	500,000 ՀՀ դրամ, 1,200 ԱՄՆ դոլար և 1.200 Եվրո		
Ներդրվող առավելագույն գումար	100,000,000 ՀՀ դրամ, 250,000 ԱՄՆ դոլար և 250.000 Եվրո		
Ժամկետ	3 տարի		
Տարեկան տոկոսադրույք	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
	8.5%	4.25%	2.4%
Տարեկան տոկոսային եկամտաբերություն	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
	8,84%	4.33%	2.43%
Տոկոսագումարների վճարման եղանակ*	ամսական		
Ավանդի գումարի համալրում**	թույլատրվում է պայմանագրի գործողության ժամկետի ամբողջ ընթացքում, բացառությամբ ավանդի մարման ժամկետին նախորդող 90 օրվա		
Ավանդի գումարի նվազեցում***	- ավանդի ներդրման օրվանից մինչև 180 օր ժամանակահատվածում՝ տարեկան 0.1%-ով: - ավանդի ներդրման օրվանից 180 օրը լրանալուց հետո՝ առանց հաշվեգրված և/կամ վճարված տոկոսագումարների վերահաշվարկի		

*Տոկոսագումարների վճարումն իրականացվում է ամսական պարբերականությամբ: Ըստ հաճախորդի ցանկության՝ տոկոսագումարները կվճարվեն.

- ավելացնելով ավանդի գումարին (կապիտալացում)
- ավանդատուի բանկային կամ քարտային հաշվին

**Ավանդային պայմանագրի գործողության ընթացքում բոլոր համալրումների (բացառությամբ տոկոսագումարների կապիտալացման գումարների) ընդհանուր գումարը չի կարող գերազանցել ավանդի սկզբնական գումարը:

***Թույլատրվում է ավանդի գումարի նվազեցում մասնակի կամ ամբողջությամբ պայմանագրի գործողության ողջ ընթացքում նվազեցվող գումարի վրա.

- Ավանդի ներդրման օրվանից մինչև 180 օր ժամանակահատվածում՝ վերահաշվարկ է լինում տարեկան 0,1% դրույքաչափով:
- Ավանդի ներդրման օրվանից 180 օրը լրանալուց հետո՝ առանց հաշվեգրված և/կամ վճարված տոկոսագումարների վերահաշվարկի (համաձայն պայմանագրով սահմանված տոկոսադրույքի)
- 181 և ավելի դեպքում վերահաշվարկի տոկոս չի կիրառվում

Ուշադրություն. մինչև 180 օրը մասնակի կամ ամբողջությամբ խզված գումարի դեպքում ավել վճարված տոկոսագումարները գանձվում են վերադարձվող կամ նվազեցվող ավանդի գումարից:

Նվազեցվող գումարի դիմաց տոկոսագումարների հաշվեգրումն իրականացվում է ավանդի ներդրման օրվանից մինչև հետ պահանջելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի (փաստացի օրացուցային օրերի) համար:

Ուշադրություն. Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանաք Դուք՝ Ձեր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում:

Ավանդային պայմանագրով վճարվող տոկոսների հաշվարկման օրինակ.

Գումար -500,000 ՀՀ դրամ

Տոկոս տարեկան -8,75%

Ժամկետ -3 տարով

3 տարվա տոկոսադրույքը կկազմի 131,250 ՀՀ դրամ (ներառյալ 10 տոկոս եկամտահարկ)

Պահանջվող փաստաթղթեր

- Անձնագիր (կամ նույնականացման քարտ) կամ զինվորական գրքույկ, իսկ օտարերկրյա քաղաքացի լինելու դեպքում (բացառությամբ երկքաղաքացիության)՝ անձնագիր՝ հայերեն թարգմանությամբ և նոտարական վավերացմամբ
- Սոցիալական քարտ կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին
- Միջոցները ներդնելու և/կամ տնօրինելու լիազորված անձի դեպքում՝ անձնագիր, սոցիալական քարտ կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին և/կամ լիազորագիր:

Կարևոր է իմանալ

- Ավանդատուի համար բանկային հաշիվները բացվում են անվճար: Պայմանագիրը մարվելուց 1 ամիս անց պայմանագրի չկնքման պարագայում, ընթացիկ հաշիվը դառնում է վճարովի՝ ըստ բանկում գործող սակագնի
- Քարտային հաշիվները բացվում են անվճար՝ համաձայն ավանդատուներին պլաստիկ քարտերի տրամադրման պայմանների
- Կուտակված տոկոսագումարները հաշվեգրվում են ավանդի գումարին կամ հաճախորդի կողմից նշված բանկային կամ քարտային հաշվին
- Տոկոսագումարները վճարվում են տվյալ ավանդատեսակի համար սահմանված սկզբնական նվազագույն գումարի և ավանդի գործողության ընթացքում կատարված ավանդին համալրումների/ տոկոսի կապիտալացումների/ կամ նվազեցումների հիման վրա
- Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- Երբ ժամկետային ավանդը ավանդատուի պահանջով վերադարձվում է մինչև ժամկետի ավարտը կամ մինչև ավանդային պայմանագրում նշված հանգամանքների վրա հասնելը, ավանդատուի տոկոսները վճարվում են բանկի կողմից ցպահանջ ավանդների համար սահմանված չափերով:
- Երբ ավանդատուն ժամկետի ավարտից հետո չի պահանջում վճարել ժամկետային ավանդի գումարը կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները երևան գալուց հետո վերադարձնել այլ պայմաններով ներդրված ավանդի գումարը, պայմանագիրը երկարաձգված է համարվում ցպահանջ ավանդի պայմաններով: Այն դեպքում, երբ պայմանագրով նախատեսված է այլ բան.
- Հաշվարկված տոկոսները վճարման պահին ենթակա են հարկման «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով, ընդ որում ԱրարատԲանկ ԲԲԸ-ն այս դեպքում հանդիսանում է հարկային գործակալ՝ եկամտային հարկի գծով:
- Ավանդային հաշվին կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները՝ նրա ավանդի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:
- Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են ավանդը բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:
- Եթե ավանդային պայմանագրում նշված ժամկետի ավարտից հետո ավանդատուն չի պահանջում վերադարձնել ավանդը, ապա ավանդի գումարը Բանկը փոխադրում է ավանդատուի անվամբ Բանկում բացված բանկային հաշվին, որի գումարի վրա տոկոսները հաշվեգրվում են ըստ Բանկում գործող սակագների: Պայմանագրով նախատեսված ժամկետում տոկոսն ավանդատուի կողմից չստանալու դեպքում, Բանկն այդ գումարը փոխադրում է ավանդատուի անվամբ Բանկում բացված բանկային հաշվին, որի վրա տոկոսները հաշվեգրվում են ըստ Բանկում գործող սակագների:
- Ավանդային պայմանագրով որոշված տոկոսների չափը, որը ավանդատուն ներդրել է որոշակի

Ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, բանկը չի կարող միակողմանի նվազեցնել

- ԿՈՂՄԵՐԻ միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: ԱՎԱՆԴԱՏՈՒՆ իրավունք ունի նաև ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ բխող իր պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարի քննությանը: ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ստորագրմամբ ԱՎԱՆԴԱՏՈՒՆ տեղեկացվում է նաև, որ ԲԱՆԿԸ 07.10.2022թ.-ից հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից 50.000 ՀՀ դրամը չգերազանցող գույքային պահանջների վերաբերյալ կայացրած որոշումները վիճարկելու իրավունքից:
- Հաշվի նվազագույն մնացորդի չափ չի սահմանվում, ինչպես նաև հաշվից գանձվելիք կամ ավանդատուի կողմից վճարվելիք սակագներ և տուժանքներ առկա չեն ավանդի գործողության ամբողջ ժամանակահատվածում:

ԱրարատԲանկում ֆիզիկական անձանց կողմից ներդրված ավանդները երաշխավորված են [«Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի»](#) կողմից: Դրամային ավանդների համար երաշխավորման առավելագույն չափը 16 միլիոն ՀՀ դրամ է, իսկ արտարժույթային ավանդների համար՝ 7 միլիոն ՀՀ դրամ: Նույն բանկում ՀՀ դրամով և արտարժույթով ավանդ ունենալու դեպքում.

- եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը առավելագույնը 16 միլիոն դրամի չափով
- եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է, ապա երաշխավորվում է առավելագույնը 7 միլիոն դրամի չափով (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով):

Մերառական հաշիվները չեն հատուցվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Պլաստիկ քարտեր ավանդատուներին

Ավանդատուի համար բանկային և քարտային հաշիվները բացվում են անվճար: Պայմանագիրը մարվելուց 1 ամիս անց պայմանագրի չկնքման պարագայում, ընթացիկ հաշիվը դառնում է վճարովի՝ ըստ բանկում գործող սակագնի:

Քարտերը տրամադրվում են առանց տարեկան սպասարկման վճարի և չնվազող մնացորդի սահմանման:

Արժույթ	MC Standard/Visa Classic	MC Gold/ Visa Gold	MC Gold/Visa Gold, Diners Club Young Professional
ՀՀ դրամ	2,000,000 մինչև 10,000,000 ավանդի	10,000,001-ից մինչև 40,000,000 ավանդի	40,000,000-ից ավել ավանդի գումարի մնացորդ/համարժեք

	գումարի մնացորդ /համարժեք պարտատոմսակգրնական ներդրվող գումար	գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	պարտատոմս
ԱՄՆ դոլար	5,000 մինչև 20,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	20,001-ից մինչև 100,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	100,000-ից ավել ավանդի գումարի մնացորդ/համարժեք պարտատոմս
Եվրո	5,000 մինչև 20,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	20,001-ից մինչև 100,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	100,000-ից ավել ավանդի գումարի մնացորդ/համարժեք պարտատոմս

Նշված սահմանաչափերը վերաբերում են Բանկում հաճախորդի ունեցած բոլոր գործող ավանդների/պարտատոմսերի գումարների մնացորդների հանրագումարին:

Քարտը կարող է տրամադրվել ավանդատուին կամ նրա կողմից Բանկ ներկայացված այլ անձի:

Քարտերի ժամկետը լրանալու դեպքում դրանք կարող են վերաթողարկել նույն պայմաններով, եթե առկա է աղյուսակում նշված սահմանաչափերին համապատասխան գործող ավանդ:

«Ձեր ֆինանսական տեղեկատվություն» ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է:

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ Ձեր նախընտրած եղանակով փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

2.Ժամկետային ավանդ

Ավանդի տեսակ	Ժամկետային
Ավանդի նվազագույն գումար	100.000ՀՀ դրամ, 250 ԱՄՆ դոլար, 250

		Եվրո		
Արժույթ		ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	Եվրո
45-90 օր ժամկետով	Տարեկան տոկոսադրույք	4.50%	0.5%	0.25%
	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	4.57%	0.5%	0.25%
91-180 օր ժամկետով	Տարեկան տոկոսադրույք	5.5%	1.5%	0.75%
	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	5.63%	1.51%	0.75%
181-270 օր ժամկետով	Տարեկան տոկոսադրույք	6.5%	2.25%	1.25%
	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	6.69%	2.27%	1.26%
271-365 օր ժամկետով	Տարեկան տոկոսադրույք	7.5%	3.25%	1.75%
	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	7.76%	3.3%	1.76%
366-545 օր ժամկետով	Տարեկան տոկոսադրույք	9%	4.5%	2.5%
	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	9.38%	4.59%	2.53%
546-730 օր ժամկետով	Տարեկան տոկոսադրույք	9.25%	4.60%	2.60%
	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	9.65%	4.59%	2.63%
731-1095 օր ժամկետով	Տարեկան տոկոսադրույք	9.5%	4.75%	2.75%
	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	9.92%	4.85%	2.78%

Ուշադրություն. Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանաք Դուք՝ Ձեր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում:

Պահանջվող փաստաթղթեր

- Անձնագիր (կամ նույնականացման քարտ) կամ զինվորական գրքույկ, իսկ օտարերկրյա քաղաքացի լինելու դեպքում (բացառությամբ երկքաղաքացիության)՝ անձնագիր՝ հայերեն թարգմանությամբ և նոտարական վավերացմամբ
- Սոցիալական քարտ կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ

հատկացնելու մասին

- Միջոցները ներդնելու և/կամ տնօրինելու լիազորված անձի դեպքում՝ անձնագիր, սոցիալական քարտ կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին և/կամ լիազորագիր:

Կարևոր է իմանալ

- Ավանդատուի համար բանկային հաշիվները բացվում են անվճար: Պայմանագիրը մարվելուց 1 ամիս անց պայմանագրի չկնքման պարագայում, ընթացիկ հաշիվը դառնում է վճարովի՝ ըստ բանկում գործող սակագնի
- Քարտային հաշիվները բացվում են անվճար՝ համաձայն ավանդատուներին պլաստիկ քարտերի տրամադրման պայմանների: Պայմաններին կարող եք ծանոթանալ «Պլաստիկ քարտեր ավանդատուներին» բաժնում
- 100,000,000 ՀՀ դրամ կամ 250,000 ԱՄՆ դոլար կամ 250,000 Եվրո և ավելի գումարով ավանդների ներգրավման դեպքում տոկոսադրույքները կսահմանվեն պայմանագրային հիմունքներով
- 1095 օր և ավել ժամկետով ներդնելու դեպքում տոկոսադրույքները կսահմանվեն պայմանագրային հիմունքներով
- Պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ ավանդատուի կողմից ավանդի գումարը կամ դրամի մասը (պայմանագիրը դադարեցվում է ամբողջությամբ) ետ պահանջելու դեպքում հաշվարկվում է տարեկան ցպահանջ ավանդի տոկոսադրույքով, իսկ արդեն վճարված տոկոսագումարները պահվում են վերադարձվող ավանդի գումարից
- Ցպահանջ ավանդի տոկոսադրույքը սահմանվում է տարեկան 0.1%
- Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են ավանդը բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար
- Կուտակված տոկոսագումարները չեն հաշվեգրվում ավանդի գումարին
- Ավանդային պայմանագրով որոշված տոկոսների չափը, որը ավանդատուն ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, բանկը չի կարող միակողմանի նվազեցնել:
- Հաշվարկված տոկոսները վճարման պահին ենթակա են հարկման «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով, ընդ որում ԱրարատԲանկ ԲԲԸ-ն այս դեպքում հանդիսանում է հարկային գործակալ՝ եկամտային հարկի գծով
- Եթե ավանդային պայմանագրում նշված ժամկետի ավարտից հետո ԱՎԱՆԴԱՏՈՒՆ չի պահանջում վերադարձնել ԱՎԱՆԴԸ, ապա ԱՎԱՆԴԻ գումարը ԲԱՆԿԸ փոխադրում է ԱՎԱՆԴԱՏՈՒԻ անվամբ ԲԱՆԿՈՒՄ բացված բանկային հաշվին, որի գումարի վրա տոկոսները հաշվեգրվում են ըստ ԲԱՆԿՈՒՄ գործող սակագների: Պայմանագրով նախատեսված ժամկետում տոկոսն ԱՎԱՆԴԱՏՈՒԻ կողմից չստանալու դեպքում, ԲԱՆԿՆ այդ գումարը փոխադրում է ԱՎԱՆԴԱՏՈՒԻ

անվամբ ԲԱՆԿՈՒՄ բացված բանկային հաշվին, որի վրա տոկոսները հաշվեգրվում են ըստ ԲԱՆԿՈՒՄ գործող սակագների

- Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ
- ԿՈՂՄԵՐԻ միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: ԱՎԱՆԴԱՏՈՒՆ իրավունք ունի նաև ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ բխող իր պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարի քննությանը: ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ստորագրմամբ ԱՎԱՆԴԱՏՈՒՆ տեղեկացվում է նաև, որ ԲԱՆԿԸ 07.10.2022թ.-ից հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից 50.000 ՀՀ դրամը չգերազանցող գույքային պահանջների վերաբերյալ կայացրած որոշումները վիճարկելու իրավունքից:
- Հաշվի նվազագույն մնացորդի չափ չի սահմանվում, ինչպես նաև հաշվից գանձվելիք կամ ավանդատուի կողմից վճարվելիք սակագներ և տուժանքներ առկա չեն ավանդի գործողության ամբողջ ժամանակահատվածում:

Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկի ներկայացուցչական օրինակ

1) Գումար – 3,200.00 Եվրո

Տոկոս տարեկան -2.50%

Ժամկետ -370 օր

370 օրվա տոկոսադրույքը կկազմի 81 Եվրո/կամ համարժեք ՀՀ դրամ (ներառյալ 10 տոկոս եկամտահարկ, տարին ընդունելով 365)

2) Գումար – 3,200.00 Եվրո

Տոկոս տարեկան -2.53%

Տարի -370 օր

370 օրվա տոկոսադրույքը կկազմի 83 Եվրո/կամ համարժեք ՀՀ դրամ (ներառյալ 10 տոկոս եկամտահարկ, տարին ընդունելով 365)

ԱրարատԲանկում ֆիզիկական անձանց կողմից ներդրված ավանդները երաշխավորված են [«Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի»](#) կողմից: Դրամային ավանդների համար երաշխավորման առավելագույն չափը 16 միլիոն ՀՀ դրամ է, իսկ արտարժույթային ավանդների համար՝ 7 միլիոն ՀՀ դրամ: Նույն բանկում ՀՀ դրամով և արտարժույթով ավանդ ունենալու դեպքում.

- եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը առավելագույնը 16 միլիոն դրամի չափով
- եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է, ապա երաշխավորվում է առավելագույնը 7 միլիոն դրամի չափով (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով):

Մեքադական հաշիվները չեն հատուցվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Պլաստիկ քարտեր ավանդատուներին

Քարտերը տրամադրվում են առանց տարեկան սպասարկման վճարի և չնվազող մնացորդի սահմանման:

Արժույթ	MC Standard/Visa Classic	MC Gold/ Visa Gold	MC Gold/Visa Gold, Diners Club Young Professional
ՀՀ դրամ	2,000,000 մինչև 10,000,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմսակցքնական ներդրվող գումար	10,000,001-ից մինչև 40,000,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	40,000,000-ից ավել ավանդի գումարի մնացորդ/համարժեք պարտատոմս
ԱՄՆ դոլար	5,000 մինչև 20,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	20,001-ից մինչև 100,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	100,000-ից ավել ավանդի գումարի մնացորդ/համարժեք պարտատոմս
Եվրո	5,000 մինչև 20,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	20,001-ից մինչև 100,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	100,000-ից ավել ավանդի գումարի մնացորդ/համարժեք պարտատոմս

Նշված սահմանաչափերը վերաբերում են Բանկում հաճախորդի ունեցած բոլոր գործող ավանդների/պարտատոմսերի գումարների մնացորդների հանրագումարին:

Քարտը կարող է տրամադրվել ավանդատուին կամ նրա կողմից Բանկ ներկայացված այլ անձի:

Քարտերի ժամկետը լրանալու դեպքում դրանք կարող են վերաթողարկել նույն պայմաններով, եթե առկա է աղյուսակում նշված սահմանաչափերին համապատասխան գործող ավանդ:

«Ձեր ֆինանսական տեղեկատվություն» ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է:

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ Ձեր նախընտրած եղանակով փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

3.4ուտակային ավանդ

Ավանդի տեսակ				
Արժույթ	Ավանդի նվազագույն գումար	Տարեկան տոկոսադրույք	Տարեկան տոկոսային եկամտաբերություն	Ավանդի համալրման վերջնաժամկետ (Ավանդի ժամկետի ավարտի ցառաջ)
91-180 օր ժամկետով				
ՀՀ դրամ	10.000	4.5%	4.5%	30 օր
ԱՄՆ դոլար	25	0.75%	0.75%	
181-270 օր ժամկետով				
ՀՀ դրամ	10.000	5.5%	5.5%	30 օր
ԱՄՆ դոլար	25	1.75%	1.75%	
271-365 օր ժամկետով				
ՀՀ դրամ	10.000	7%	7%	30 օր
ԱՄՆ դոլար	25	2.75%	2.75%	
366-459 օր ժամկետով				
ՀՀ դրամ	10.000	8%	8%	30 օր
ԱՄՆ դոլար	25	3.75%	3.75%	

Կուտակվող ավանդի առավելագույն չափը կարող է լինել 100,000,000 ՀՀ դրամ կամ 250,000 ԱՄՆ դոլար:

Ուշադրություն. Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս,

թե որքան եկամուտ կստանաք Դուք՝ Ձեր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում:

Պահանջվող փաստաթղթեր

- Անձնագիր (կամ նույնականացման քարտ) կամ զինվորական գրքույկ, իսկ օտարերկրյա քաղաքացի լինելու դեպքում (բացառությամբ երկքաղաքացիության)՝ անձնագիր՝ հայերեն թարգմանությամբ և նոտարական վավերացմամբ
- Սոցիալական քարտ կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին
- Միջոցները ներդնելու և/կամ տնօրինելու լիազորված անձի դեպքում՝ անձնագիր, սոցիալական քարտ կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին և/կամ լիազորագիր:

Կարևոր է իմանալ

- Ավանդատուի համար բանկային հաշիվները բացվում են անվճար: Պայմանագիրը մարվելուց 1 ամիս անց պայմանագրի չկնքման պարագայում, ընթացիկ հաշիվը դառնում է վճարովի՝ ըստ բանկում գործող սակագնի:
- Քարտային հաշիվները բացվում են անվճար՝ համաձայն ավանդատուներին պլաստիկ քարտերի տրամադրման պայմանների: Պայմաններին կարող եք ծանոթանալ «Պլաստիկ քարտեր ավանդատուներին» բաժնում:
- Տոկոսագումարը վճարվում է ավանդային պայմանագրի ժամկետի ավարտին:
- Կուտակված տոկոսագումարները չեն հաշվեգրվում ավանդի գումարին:
- Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են ավանդը բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:
- Ավանդային հաշվին կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները՝ նրա ավանդի մասին անհրաժեշտ տվյալների նշումով:
- Պայմանագրով նախատեսված ժամկետից շուտ ավանդատուի կողմից ավանդի գումարը կամ դրա մի մասը (պայմանագիրը դադարեցվում է ամբողջությամբ) ետ պահանջելու դեպքում հաշվարկվում է տարեկան ցպահանջ ավանդի տոկոսադրույքով
- Ցպահանջ ավանդի տոկոսադրույքը սահմանվում է տարեկան 0.1% տոկոս
- 460 օր և ավելի դեպքում ներգրավման դեպքում տոկոսադրույքները կսահմանվեն պայմանագրային հիմունքներով
- Համալրումները կարող են կատարվել ցանկացած ժամանակ մինչև ավանդային պայմանագրի

Ժամկետի ավարտին նախորդող 30-րդ օրը:

- Ավանդային պայմանագրով որոշված տոկոսների չափը, որը ավանդատուն ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, բանկը չի կարող միակողմանի նվազեցնել:
- Հաշվարկված տոկոսները վճարման պահին ենթակա են հարկման «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված չափով, ընդ որում ԱՐԱՐԱՏԲԱՆԿ ԲԲԸ-ն այս դեպքում հանդիսանում է հարկային գործակալ՝ եկամտային հարկի գծով:
- Եթե ավանդային պայմանագրում նշված ժամկետի ավարտից հետո ԱՎԱՆԴԱՏՈՒՆ չի պահանջում վերադարձնել ԱՎԱՆԴԸ, ապա ԱՎԱՆԴԻ գումարը ԲԱՆԿԸ փոխադրում է ԱՎԱՆԴԱՏՈՒԻ անվամբ ԲԱՆԿՈՒՄ բացված բանկային հաշվին, որի գումարի վրա տոկոսները հաշվեգրվում են ըստ ԲԱՆԿՈՒՄ գործող սակագների: Պայմանագրով նախատեսված ժամկետում տոկոսն ԱՎԱՆԴԱՏՈՒԻ կողմից չստանալու դեպքում, ԲԱՆԿՆ այդ գումարը փոխադրում է ԱՎԱՆԴԱՏՈՒԻ անվամբ ԲԱՆԿՈՒՄ բացված բանկային հաշվին, որի վրա տոկոսները հաշվեգրվում են ըստ ԲԱՆԿՈՒՄ գործող սակագների:
- Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:
- ԿՈՂՄԵՐԻ միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով: ԱՎԱՆԴԱՏՈՒՆ իրավունք ունի նաև ՊԱՅՄԱՆԱԳՐԻՑ բխող իր պահանջները ներկայացնել Ֆինանսական համակարգի հաշտարարի քննությանը: ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ստորագրմամբ ԱՎԱՆԴԱՏՈՒՆ տեղեկացվում է նաև, որ ԲԱՆԿԸ 07.10.2022թ.-ից հրաժարվել է Ֆինանսական համակարգի հաշտարարի կողմից 50.000 ՀՀ դրամը չգերազանցող գույքային պահանջների վերաբերյալ կայացրած որոշումները վիճարկելու իրավունքից:
- Հաշվի նվազագույն մնացորդի չափ չի սահմանվում, ինչպես նաև հաշվից գանձվելիք կամ ավանդատուի կողմից վճարվելիք սակագներ և տուժանքներ առկա չեն ավանդի գործողության ամբողջ ժամանակահատվածում:

Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկի ներկայացուցչական օրինակ

Գումար – 7,800.00 ԱՄՆ դոլար

Տոկոս տարեկան -3.50%

Ժամկետ -453 օր

453 օրվա տոկոսադրույքը կկազմի 339 ԱՄՆ դոլար/կամ համարժեք ՀՀ դրամ (ներառյալ 10 տոկոս եկամտահարկ, տարին ընդունելով 365)

ԱրարատԲանկում ֆիզիկական անձանց կողմից ներդրված ավանդները երաշխավորված են [«Ավանդների հապուցումը երաշխավորող հիմնադրամի»](#) կողմից: Դրամային ավանդների համար երաշխավորման

առավելագույն չափը 16 միլիոն ՀՀ դրամ է, իսկ արտարժույթային ավանդների համար՝ 7 միլիոն ՀՀ դրամ: Նույն բանկում ՀՀ դրամով և արտարժույթով ավանդ ունենալու դեպքում.

- եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը առավելագույնը 16 միլիոն դրամի չափով
- եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է, ապա երաշխավորվում է առավելագույնը 7 միլիոն դրամի չափով (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով):

Մետադական հաշիվները չեն հատուցվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Պլաստիկ քարտեր ավանդատուներին

Քարտերը տրամադրվում են առանց տարեկան սպասարկման վճարի և չնվազող մնացորդի սահմանման:

Արժույթ	MC Standard/Visa Classic	MC Gold/ Visa Gold	MC Gold/Visa Gold, Diners Club Young Professional
ՀՀ դրամ	2,000,000 մինչև 10,000,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմսակա ներդրվող գումար	10,000,001-ից մինչև 40,000,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	40,000,000-ից ավել ավանդի գումարի մնացորդ/համարժեք պարտատոմս
ԱՄՆ դոլար	5,000 մինչև 20,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	20,001-ից մինչև 100,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	100,000-ից ավել ավանդի գումարի մնացորդ/համարժեք պարտատոմս
Եվրո	5,000 մինչև 20,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	20,001-ից մինչև 100,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	100,000-ից ավել ավանդի գումարի մնացորդ/համարժեք պարտատոմս

Նշված սահմանաչափերը վերաբերում են Բանկում հաճախորդի ունեցած բոլոր գործող ավանդների/պարտատոմսերի գումարների մնացորդների հանրագումարին:

Քարտը կարող է տրամադրվել ավանդատուին կամ նրա կողմից Բանկ ներկայացված այլ անձի:
Քարտերի ժամկետը լրանալու դեպքում դրանք կարող են վերաթողարկել նույն պայմաններով, եթե առկա է աղյուսակում նշված սահմանաչափերին համապատասխան գործող ավանդ:

«Ձեր ֆինանսական տեղեկատվություն» ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է:
Դուք իրավունք ունեք հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ Ձեր նախընտրած եղանակով փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն:

4. Մանկական ավանդ

Ավանդի տեսակ			Ժամկետային	
Ավանդի ժամկետ	Տոկոսադրույքները (տարեկան)		Տարեկան տոկոսային եկամտաբերություն՝ տոկոսագումարների տարեկան ստացման դեպքում	
4-18 տարի	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար	ՀՀ դրամ	ԱՄՆ դոլար
	9.5%	4.5%	9.5%	4.5%
Ավանդի նվազագույն գումար	20,000 ՀՀ դրամ, 50 ԱՄՆ դոլար			

Ուշադրություն. Ձեր հաշվում առկա միջոցների նկատմամբ տոկոսագումարները հաշվարկվում են անվանական տոկոսադրույքի հիման վրա: Իսկ տարեկան տոկոսային եկամտաբերությունը ցույց է տալիս, թե որքան եկամուտ կստանաք Դուք՝ Ձեր կողմից ավանդի հետ կապված պարտադիր վճարներ կատարելու և սահմանված պարբերականությամբ վաստակած տոկոսագումարները ստանալու արդյունքում:

Պահանջվող փաստաթղթեր

- Անձնագիր (կամ նույնականացման քարտ) կամ զինվորական գրքույկ, իսկ օտարերկրյա քաղաքացի լինելու դեպքում (բացառությամբ երկքաղաքացիության)՝ անձնագիր՝ հայերեն թարգմանությամբ և նոտարական վավերացմամբ
- Սոցիալական քարտ կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին
- Երեխայի ծննդյան վկայական և սոցիալական քարտ կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին
- Միջոցները ներդնելու և/կամ տնօրինելու լիազորված անձի դեպքում՝ անձնագիր, սոցիալական քարտ կամ տեղեկանք հանրային ծառայությունների համարանիշ հատկացնելու մասին և/կամ լիազորագիր

Կարևոր է իմանալ

- Ավանդատուի համար բանկային հաշիվները բացվում են անվճար: Պայմանագիրը մարվելուց 1 ամիս անց պայմանագրի չկնքման պարագայում, ընթացիկ հաշիվը դառնում է վճարովի՝ ըստ բանկում գործող սակագնի:
- Քարտային հաշիվները բացվում են անվճար՝ համաձայն ավանդատուներին պլաստիկ քարտերի տրամադրման պայմանների:
- Տոկոսները կարող են վճարվել տարեկան, այն հաշվեգրելով ըստ հաճախորդի ընտրության՝ իր բանկային կամ քարտային հաշվին, կամ կարող են տարին մեկ անգամ կապիտալացվել մայր գումարին:
- Ավանդը կարելի է համալրել պայմանագրային ժամկետի ամբողջ ընթացքում, բացառությամբ ավանդի մարման ժամկետին նախորդող 30 օրվա ընթացքում
- Ավանդային հաշվին կարող են մուտքագրվել նաև երրորդ անձանցից ստացված դրամական միջոցները՝ նրա ավանդի մասին անհրաժեշտ տվյալների նշումով
- Ավանդի տոկոսադրույքը սահմանվում է ֆիքսված 4 տարի, որից հետո յուրաքանչյուր 4 տարին մեկ այն կարող է վերանայվել Բանկի կողմից:
- Ավանդային պայմանագրով որոշված տոկոսների չափը, որը ավանդատուն ներդրել է որոշակի ժամկետի ավարտից կամ պայմանագրով նախատեսված հանգամանքները վրա հասնելուց հետո այն հետ ստանալու պայմանով, բանկը չի կարող միակողմանի նվազեցնել
- Հաշվարկված տարեկան տոկոսագումարը վճարման պահին ենթակա է հարկման «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով սահմանված չափով
- Ներդնելուց սկսած մինչև չորս տարին լրանալը ավանդատուի կողմից ավանդի գումարը կամ դրա մի մասը պահանջելու դեպքում, այդ գումարի նկատմամբ վերահաշվարկվում է տարեկան 0,1%-ի չափով տոկոսագումար՝ ավանդի ներդրման հաջորդ օրվանից մինչև հետ պահանջելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի համար, իսկ ավել վճարված տոկոսագումարները

պահվում են վերադարձվող ավանդի մայր գումարից:

- Բանկային ավանդի գումարի վրա տոկոսները հաշվարկվում են ավանդը բանկ մուտք լինելու օրվանից մինչև այն ավանդատուին վերադարձնելու կամ ավանդատուի հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդող օրն ընկած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:
- Եթե ավանդային պայմանագրում նշված ժամկետի ավարտից հետո ավանդատուն չի պահանջում վերադարձնել ավանդը, ապա ավանդի գումարը Բանկը փոխադրում է ավանդատուի անվամբ Բանկում բացված բանկային հաշվին, որի գումարի վրա տոկոսները հաշվեգրվում են ըստ Բանկում գործող սակագների: Պայմանագրով նախատեսված ժամկետում տոկոսն ավանդատուի կողմից չստանալու դեպքում, Բանկն այդ գումարը փոխադրում է ավանդատուի անվամբ Բանկում բացված բանկային հաշվին, որի վրա տոկոսները հաշվեգրվում են ըստ Բանկում գործող սակագների
- Բանկն իրավունք ունի փոփոխելու ցպահանջ ավանդների և բանկային հաշվում եղած դրամական միջոցների համար վճարվող տոկոսների չափը, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ
- Հաշվի նվազագույն մնացորդի չափ չի սահմանվում, ինչպես նաև հաշվից գանձվելիք կամ ավանդատուի կողմից վճարվելիք սակագներ և տուժանքներ առկա չեն ավանդի գործողության ամբողջ ժամանակահատվածում:

Տարեկան տոկոսային եկամտաբերության հաշվարկի ներկայացուցչական օրինակ.

Գումար – 1,800,000.00 ՀՀ դրամ

Տոկոս տարեկան -9.75%

Ժամկետ- 4 տարի

4 տարվա տոկոսադրույքը կկազմի 702,000.00 ՀՀ դրամ (ներառյալ 10 տոկոս եկամտահարկ, տարին ընդունելով 365)

ԱրարատԲանկում ֆիզիկական անձանց կողմից ներդրված ավանդները երաշխավորված են [«Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի»](#) կողմից: Դրամային ավանդների համար երաշխավորման առավելագույն չափը 16 միլիոն ՀՀ դրամ է, իսկ արտարժույթային ավանդների համար՝ 7 միլիոն ՀՀ դրամ: Նույն բանկում ՀՀ դրամով և արտարժույթով ավանդ ունենալու դեպքում.

- եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է, ապա երաշխավորվում է միայն դրամային ավանդը առավելագույնը 16 միլիոն դրամի չափով
- եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից պակաս է, ապա երաշխավորվում է առավելագույնը 7 միլիոն դրամի չափով (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն դրամի և հատուցման ենթակա դրամային ավանդի տարբերության չափով):

Մեքսիկական հաշիվները չեն հատուցվում Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից:

Պլաստիկ քարտեր ավանդատուներին

Քարտերը տրամադրվում են առանց տարեկան սպասարկման վճարի և չնվազող մնացորդի սահմանման:

Արժույթ	MC Standard/Visa Classic	MC Gold/ Visa Gold	MC Gold/Visa Gold, Diners Club Young Professional
ՀՀ դրամ	2,000,000 մինչև 10,000,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմսակազմի ներդրվող գումար	10,000,001-ից մինչև 40,000,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	40,000,000-ից ավել ավանդի գումարի մնացորդ/համարժեք պարտատոմս
ԱՄՆ դոլար	5,000 մինչև 20,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	20,001-ից մինչև 100,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	100,000-ից ավել ավանդի գումարի մնացորդ/համարժեք պարտատոմս
Եվրո	5,000 մինչև 20,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	20,001-ից մինչև 100,000 ավանդի գումարի մնացորդ /համարժեք պարտատոմս	100,000-ից ավել ավանդի գումարի մնացորդ/համարժեք պարտատոմս

Նշված սահմանաչափերը վերաբերում են Բանկում հաճախորդի ունեցած բոլոր գործող ավանդների/պարտատոմսերի գումարների մնացորդների հանրագումարին:

Քարտը կարող է տրամադրվել ավանդատուին կամ նրա կողմից Բանկ ներկայացված այլ անձի:

Քարտերի ժամկետը լրանալու դեպքում դրանք կարող են վերաթողարկել նույն պայմաններով, եթե առկա է աղյուսակում նշված սահմանաչափերին համապատասխան գործող ավանդ:

«Ձեր ֆինանսական տեղեկատվություն» ֆիզիկական անձանց առաջարկվող ծառայությունների որոնման, համեմատման և Ձեզ համար ամենաարդյունավետ տարբերակի ընտրությունը հեշտացնող էլեկտրոնային համակարգ է:

Դուք իրավունք ունեք հաղորդակցվել ֆինանսական կազմակերպության հետ Ձեր նախընտրած եղանակով՝ փոստային կապի միջոցով կամ էլեկտրոնային եղանակով: Էլեկտրոնային եղանակով տեղեկատվության ստացումը ամենահարմարավետն է: Այն հասանելի է 24/7 ռեժիմով, զերծ է թղթային տեղեկատվության կորստի ռիսկերից և ապահովում է գաղտնիություն: